**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**24.11.2023 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135**
**գնման պայմանագրի**

ք. Երևան

«18» «06» 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Օհանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.11.2023 թվականին կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 24.05.2024 թվականի թիվ Ն/28909-24 գրության կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

**1.Պայմանագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 82 մանկապարտեզի բակի բարեկարգման** աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 29590000 (քսանինը միլիոն հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի գնի մնացած 69026390 (վաթսունինը միլիոն քսանվեց հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, գումարի մասով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր

1.3 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

1.4 Հաստատել սույն համաձայնագրի կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

1.5 Պայմանագրի N 1 հավելվածի ծավալաթերթ-նախահաշվի «Ընդհանուրի արժեքը միավորի համար հազար դրամ» բառերի փոխարեն հիմք ընդունել «Միավորի արժեքը հազար դրամ» բառերը:

***2. Այլ պայմաններ***

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե ք. Երևան Տերյան 1/1 շ. 17բն |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Բանկ <<Ֆասթ Բանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900012410743 | Հ/Հ 2621057576581001 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02863508 |
| Վ.Պապիկյան ________________ (ստորագրություն) Կ.Տ | Վ.Օհանյան________________ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված թիվ 1
24.11.2023թ. կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135 պայմանագրի
«18» «06 » 2024 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45221142/713 | Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 82 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ | ... | ... | ... | ... | ... | 29590000 | 29590000 | 29590000 | 29590000 | 29590000 | 29590000 | 29590000 | 29590000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե ք. Երևան Տերյան 1/1 շ. 17բն
Բանկ <<Ֆասթ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2621057576581001
ՀՎՀՀ 02863508

Վ.Օհանյան---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
24.11.2023թ. կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135 պայմանագրի
«18» «06» 2024 թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Հ. 82 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| No | Կապալառուիկողմիցկատարվելիք աշխատանքներիանվանումներ | Աշխատանքներիկատարմանժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 82 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ | Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 30-րդ օրացուցային օրը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012410743
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԱՋԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե ք. Երևան Տերյան 1/1 շ. 17բն
Բանկ <<Ֆասթ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2621057576581001
ՀՎՀՀ 02863508

Վ.Օհանյան------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

# FASTBANK

E 26230-55

14.06.2024թ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N E33000270
(պայմանագրի ապահովում)

Քաղաք Երևան

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (հասցե՝ ք. Երևան, Արգիշտիի 1), այսուհետ՝ Բենեֆիցիար և **«ԱԶԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության** (գրանցման համար՝ 286.110.1237142, գրանցման ամսաթիվ՝ 12.05.2022թ.-ին, ՀՎՀՀ՝ 02863508, իրավաբանական հասցե՝ ՏԵՐՅԱՆ Փ. / Շ / 1/1 / 17բն. ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ) ի դեմս տնօրեն ՎԱՀԱԳՆ ՄՈՒՇԵՂԻ ՕՀԱՆՅԱՆԻ, այսուհետ՝ Պրինցիպալ, միջև կնքվելիք N **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135** պայմանագրից բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«Ֆասթ Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը** (հասցե՝ 0047, ՀՀ, ք. Երևան, Նորք- Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6, էլ-փոստ՝ fastcare@fcc.am) (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել **3,552,100 (երեք միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց՝ 5 (Հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող բենեֆիցարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցարի և պրիցիպալի միջև կնքվելիք N **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 550 օրացուցային օր ժամկետով:Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/135 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ ընկերության
Թումանյան մասնաճյուղի կառավարիչ

Կորյուն Գրիգորյան

E 26230-54

14.06.2024թ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N E33000269
(որակավորման ապահովում)

Քաղաք Երևան

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Երևանի քաղաքապետարանի** (հասցե՝ ք. Երևան, Արգիշտիի 1), այսուհետ՝ Բենեֆիցիար կողմից **ԵՔ-ԲՄԱԾՁԲ-23/135** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ԱԶԱՓՆՅԱԿ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությանը** (գրանցման համար՝ 286.110.1237142, գրանցման ամսաթիվ՝ 12.05.2022թ.-ին, ՀՎՀՀ՝ 02863508, իրավաբանական հասցե՝ ՏԵՐՅԱՆ Փ. / Շ / 1/1 / 17բն. ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ) ի դեմս տնօրեն ՎԱՀԱԳՆ ՄՈՒՇԵՂԻ ՕՀԱՆՅԱՆԻ, այսուհետ՝ Պրինցիպալ, կողմից կնքվելիք N **ԵՔ-ԲՄԱԾՁԲ-23/135** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով **«Ֆասթ Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը** (հասցե՝ 0047, ՀՀ, ք. Երևան, Նորք- Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6, էլ-փոստ՝ fastcare@fcc.am) (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել **10,656,100 (Տասը միլիոն վեց հարյուր հիսունվեց հազար հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց՝ 5 (Հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900015211429** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն Երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **ԵՔ-ԲՄԱԾՁԲ-23/135** ծածկագրով կնքվելիք պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից 180 օրացուցային օր ժամկետով: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) ԵՔ-ԲՄԱԾՁԲ-23/135 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ ընկերության
«Թումանյան» մասնաճյուղի կառավարիչ՝ Կորյուն Գ[illegible]